վիճակն գովելիս հանում է կճուճից մի առարկայ, իսկ մի ծեր կին իրի տիրոջն ասում է.—«այսքան ուչխար ունենաս». դրա վրայ ջահել աղջիկներից մէկը երգում է և վիճակը գովում։ Այժմ Համբարձումը՝ գեղեցիկ այս սովորութիւնը գիւղերում հետզհետէ վերացւում է և վիճակի երգն էլ մոռացւում։ Մինչև այսօր դեռ գիւղայի կանանց և աղջիկների բերանում պահւել են վիճակի երգերից մի քանի տուն, որ մեզ յաջողւեց մի պառաւի ասել տալ և գրի անցնել։ Ահա այդ հատուկտոր մնացորդը.

Եզը տարան խանի դուռը
Ծակտին տւին կարմիր նուռը.
Գիւլ, գիւլ, գիւլ, գիւլ համբարձումը
Ըռանգ, ըռանգ համբարձումը:

Բօստանները բուրա բուրա
Բանդի երգդին Աստւած կտայ.
Գիւլ, գիւլ, գիւլ, գիւլ համբարձումը
Ըռանգ ըռանգ համբարձումը:

Հօտաղ-մանկալ տասերնամին
Եզները լծել են չամին,
Կիտէք, կանչէք էզ ասամին.
Գիւլ, գիւլ, գիւլ, գիւլ համբարձումը
Ըռանգ, ըռանգ համբարձումը։

Հանդւորը հանդին պիղարար
Սէլւորը սէլին մուղարար.
Վինակ, վինակ տիւրլիւ չիչակ
Նարէ ծապիկ, օսկէ կոնակ:

Դու գնա՛, գնա՛, գնա ծապիկս
Հագնեմ ու գամ: (Կրկ.):
Օրօր, օրօր, օր ծաղիկ
Կարմիր ու տօրոն ծաղիկ,
Այվայա հարսներ էմ կիտի
Այվայա բռներ էմ կիտի
Գամ քեզի գօվամ ծաղիկ:

Օրօր, օրօր, օր ծաղիկ
Կարմիր ու տօրոն ծաղիկ,